

մերժումն դատարանին կողմէ՝ անարժէք գտնուելով, քանի որ թրքերէն չեն<sup>25</sup>:

Ուստի, Իրաւական Բ. Ատեանը իր վճիռը կը յայտնէ ի նպաստ «Իտարէ ի Հուսուսիյէ»-ին՝ որոշելով, թէ Սանասարեան խանը «լքեալ» է եւ կը պատկանի Կուսակալութեան, որը վճռաբեկը կը հաստատէ 4 նոյեմբեր 1935-ին: <sup>26</sup>Վճռաբեկի կողմէ տրուած «Թասհիհը քարար»-ով Սանասարեան ինքն վերջնականապէս սեփականութիւնը կը դառնայ Քաղաքապետութեան<sup>27</sup>:

Սանասարեան խանի դատէն կը ծագին սեւ մեծագումար վնասի հատուցման պահանջի դատ մը: Պոլսոյ քաղաքապետին կողմէ, 388.000 ոսկիի դատ կը բացուի Սանասարեան կտակի «միւթէվէլլի»՝ Պատրիարք Հօր դէմ, իբր վնասուց հատուցում, խանին Ձինաղաղարի տարիներուն գանձուած վարձքերուն եւ դատական ծախքերուն համար<sup>28</sup>: Ս. Պատրիարքին կողմէ պատուիրակութիւն մը (Հմայեակ Մ. Վրդ. Պախիթարեան եւ իրաւագէտ Լուծֆիկ Գուլումճեան), Անգարա երթալով, կը ներկայանայ Թուրքիոյ վարչապետ՝ Բէֆթիք Սայտամին ու առարկութեան անտեղի ըլլալը բացատրող աղերսագիր մը կը յանձնէ իրեն<sup>29</sup>:

Հակառակ, որ վարչապետը կը խոստանայ հետաքրքրուիլ, որպէսզի հարցը ա-

ռաք լուծուի, դատը կը շարունակուի մինչեւ Մեսրոպ Նարոյեան Պատրիարքի մահը՝ 1944: Յետ մահու կատարուած վերջին դատավարութեան Վարդան Պէկեան կը յայտարարէ, թէ, Պատրիարքը վախճանած ըլլալով, ինք դատարանին առջեւ իբրեւ փոխանորդ ունէ հանգամանք չունի<sup>30</sup>:

Թէեւ դատը կը յետաձգուի յառաջիկայ 24 սեպտեմբեր 1944 թուականին, բայց ոչ մի տեղեկութիւն գոյութիւն ունի անոր մասին:

Արժեթուղթերը, որոնք ի պահ գրուած էին Բեթրոկրատի Պետական դրամատան մէջ, կը փճանան ուսական քաղաքական շրջափոխութեան հետեւանքով: Իսկ Սանասարեան խանը, որ կտակին բուն դրամագլուխը կը կազմէ, ոտնձգութենէ զերծ պահելու միակ եղանակը կ'ըլլար Թուրքիոյ մէջ Սանասարեանի անունով վարժարանի մը գոյութիւնը<sup>31</sup>, որ կարելի չէ եղած դանաղան պատճառներով, որուն հետեւանքով փճացած է բարերարին կտակը, քայքայուած գիտնական Եզեանցի եւ բարեսէր Սանասարեանի համախորհուրդ ստեղծած մարդասիրական մեծ գործը եւ «Լքեալ գոյքերու» ճակատագիրը բաժնած է «Սանասարեան խանը»:

25 «Յուսարէր», 5 յուլիս, 1939:  
26 Շահնազար Յովհաննէս, Սանասարեան կտակի Դատը, Իսթանպուլ, 1939, էջ 15:  
27 «Արեւելք», 8 հոկտեմբեր, 1937:  
28 «Նոր Լուր», 26 մայիս, 1939:  
29 «Փամանակ», 29 ապրիլ, 1939:

30 «Փամանակ», 24 յուլիս, 1944:  
31 Մ. Սանասարեան իր կտակին մէջ պայման կը դնէ վարժարանը հաստատել թրքահայոց մէջ եւ Սանասարեան խանի հասոյթը յատկացնել Թուրքիոյ մէջ գտնուող հայ ազգի որբերուն:

### «ԵԿԵՂԵՑԻ» ԵԶՐԻ ՀՈԼՈՎՈՅԹԸ ԳԱՂԱՓԱՐԻՑ ԴԷՊԻ ՇԻՆՈՒԹԻՒՆ

Նազեհի Ղարիբեան

Առաջին դարերի քրիստոնէական լեզուամթերքում «եկեղեցի» բառը բնորոշող երեք հիմնական հասկացութիւնները սերում են հրէական աւանդոյթից, որտեղ դրանք համապատասխանում են «սինագոգ» բառին<sup>1</sup>: Առաջինը բնորոշում է «Աստծոյ ժողովրդին», որ Աստծոյ հետ Ուխտի միջոցով ստացած Օրէնքի շուրջ հաւաքուած մարդկանց համայնքն է<sup>2</sup> (այս ընկալումն ընկած է Հայերէն «ժողովուրդ» բառի հիմքում, որ սերում է «եկեղեցի-ΕΚΚΛΗΣΙΑ» բառի հայերէն «ժողով» թարգմանութիւնից. այստեղից էլ հայերէնում «չժողովուրդ» բառը, որ նշանակում է ոչ հրեայ կամ ոչ քրիստոնէայ): Երկրորդը պաշտամունքային ծիսակատարութեան համար ժողովուրդում հաւատացեալների խումբն է<sup>3</sup>: Երրորդն այս նպատակի համար յատկացուած վայրը կամ շինութիւնն է:

Հետաքրքիր է, որ քրիստոնէական աշխարհում «եկեղեցի» բառը լեզուաբանորէն եւ պատմականորէն զարգացման ճիշտ եւ ճիշտ նոյն ճանապարհն է անցել, ինչ «սինագոգը»՝ հրէական միջավայրում:

Սկզբնապէս արտայայտելով ընդհանրապէս «հաւատացեալների ժողով» իմաստը<sup>4</sup> «սինագոգը» ինստիտուտի նշանակութիւն է ձեռք բերում հրէաների Բաբելոնեան գերութեան շրջանում (597-538 թթ.), երբ վտարանդիները կարիք ունէին

հաւաքուելու մի վայրում, որտեղ շաբաթ օրը կը կարողանան «շփուել» Աստծոյ հետ՝ թորայի ընթերցանութիւն լսել եւ սրբազան տեքստերի մասին գրուցել ուրիշ հետ<sup>5</sup>: Վերջինիս շուրջ այս հաւաքները դառնալով մշտական եւ պարբերական՝ սինագոգի ինստիտուտն այսպիսով աստիճանաբար զարգացում ստացաւ մինչեւ երկնաբար զարգացում ստացաւ մինչեւ երկրորդ պետականութիւնը (կամ՝ երկրորդ ժամանակ պետականութիւնը (կամ՝ երկրորդ ժամանակ այն վերջնականապէս հաստատուեց որպէս աղօթքների եւ Սուրբ գրերի տուեց որպէս աղօթքների եւ Սուրբ գրերի ընթերցանութեան մշտական տեղի<sup>7</sup>, ուղեկցուելով «հանապազօրեայ գոհաբերութեան» ժողովրդայնացմամբ, երբ սինագոգներում սկսեցին կատարել կենդանական զոհաբերութիւնը խորհրդանշող ծէսեր<sup>8</sup>: Յիսուսի ժամանակ արդէն այսպիսի սինագոգների լաւ զարգացած ցանց էր գործում<sup>9</sup>: Այս ժամանակահատուածում է, որ նախկինում հրէաների համայնքը կամ ծիսական ժողովը նշանակող բառը դառնում է նաեւ այդ համայնքի հաւաքների համար կառուցուած շինութեան ճարտարապետական անունում<sup>10</sup>:

Այդուհանդերձ, հրէաները յստակ տարբերակում էին սինագոգները եւ Տաճարը. առաջինները «ժողովի տներ» էին, իսկ

1 Աւելի մանրամասն տե՛ս N. Garibian de Vartavan, La Jérusalem Nouvelle et les premiers sanctuaires chrétiens de l'Arménie: Méthode pour l'étude de de l'église comme Temple de Dieu (London-Fribourg 2009), էջ 25-34:  
2 Burtchaell, 1992, p. 209.  
3 Նոյն տեղում:  
4 DEB, 1960, p. 1783-1786.

5 Zeitlin 1930-31.  
6 Burtchaell 1992, p. 201-4 et 220-24.  
7 Hoening 1963.  
8 Zeitlin, 1930-31.  
9 Աւետարանական տեքստերում «սինագոգի» հայերէն համարժեքը «ժողովարան» բառն է:  
10 Burtchaell 1992, p. 225.





քրիստոնեայ Հեղինակներն ամէն կերպ խուսափել են գործածել ցանկացած բառ կամ արտայայտութիւն, որը որեւէ առնչութիւն ունի սրբազան կառոյցին: Ճիշտ է, տեքստերում երբեմն հանդիպում է «տուն Աստծոյ» արտայայտութիւնը (οἶκος θεοῦ, լատիներէն՝ domus Dei)<sup>48</sup>, սակայն այն պէտք է հասկանալ ըստ նորկտականային մեկնաբանութեան, զուտ հոգեւոր իմաստով՝ որպէս հաւատացեալների Եկեղեցի, որ երկնային Աստծոյ քաղաքն է<sup>49</sup>: Նշենք նաեւ, որ այդ աղբիւրներում բացակայում են եկեղեցու շինութեան աստուածաբանական մեկնաբանութիւն ենթադրող ձեւակերպումներն ու ակնարկները, լինի դա ճարտարապետական ձեւերի, Հիմնարկէքի սրբազան ծէսի, թէ օծման եւ նաւակատիքի արարողութեան վերաբերեալ: Նմանապէս, չկան Տիրոջ Եկեղեցու կամ Հրէական Տաճարի Հետ խորհրդաբանական համեմատութիւններ պարունակող պարբերութիւններ, շինութեան իւրաքանչիւր մանրամասնը օրինաչափող կանոնական սահմանումներ եւ կարգադրութիւններ կամ այդ շինութեան անուանմանը կցուած սուրբ անուններ, ինչպէս դրանց մշտական առկայութիւնը տեսնում ենք Հետագայ դարերի գրականութեան մէջ: Տեքստերը պարունակում են լոկ եկեղեցու շինութեան ներսում ծիսակատարութեանը յատկացուած հատուածում տեղադրուած խորանի նկարագրութիւններ<sup>50</sup>:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ այնքան ժամանակ, քանի դեռ քրիստոնեաները իրենց «աղօթից տներին» չէին շնորհել սրբազան տաճարի արժէք, այդ շինութիւնների Հիմնարկէքը, ճարտարապետա-

կան ձեւերը, տեղադրութիւնը եւ անուանումը նրանց համար որեւէ սրբազան բնոյթ չէին կրում եւ կրօնական տեսակետից կարեւորութիւն չունէին: Ահա թէ ինչու այդ շինութիւնները կարող էին լինել ցանկացած տիպի եւ ընդօրինակել այդ ժամանակուայ յայտնի ցանկացած ճարտարապետական ձեւեր, պայմանով, որ դրանք լաւագոյնս բաւարարէին համայնքի ծիսական պահանջները:

Գ. դարի եկեղեցիների մասին շատ քիչ Հնագիտական տուեալներ կան. եզակի պահպանուած նմուշներից են Հռոմի տիտղոսները (titulus) եւ Դուրա Եւրոպոսի տուն-եկեղեցին (նկ. 4): Բայց յաջորդ երկու դարերի փաստագրական նիւթերը Հնարաւորութիւն են տալիս պնդել, որ մինչեւ Դ. դարի կէսերը քրիստոնէական պաշտամունքային շէնքերի յատկապէս շինութեան եւ կառուցողական կանոն եւ համաձեւութիւն չի եղել<sup>51</sup>: Վերջինը երեւան է գալիս ասորա-պաղեստինեան բազիլիկաների օրինակով եւ սկսում է պարբերական բնոյթ կրել Հռոմէական կայսրութեան ողջ տարածքում Ե. դարի ընթացքում, երբ վերջնականապէս հաստատուում է նաեւ սուրբ խորանի՝ դէպի արեւելք կողմնորոշումը<sup>52</sup>: Մեզ համար այս եզրակացութիւնը յատկապէս կարեւոր է հայ վաղ աղբիւրներում «եկեղեցի» եզրին վերաբերող տեղեկութիւնների եւ հայկական վաղքրիստոնէական եկեղեցիների հնագիտական շերտերի թուագրման առումով:

Եկեղեցու տիպաբանական համաձեւութեան տարածումը մասնագէտների կողմից պատճառաբանւում է Կոստանդին Մեծի եւ նրա յաջորդների՝ կայսերական Հեղինակութեան անմիջական միջամտութեամբ, եկեղեցական բարձր դասի ներկայացուցիչների ինտենսիւ շրջապայութիւններով ու տեղափոխութիւններով, քրիստոնէական

48 Ինչպէս օրինակ՝ Եւսեբիոս Կեսարացի, Եկեղ. պատմ. VII, 30, 9, Տերտուլիանոս, De idololatria, 7 (31).  
 49 Եբր., Գ 6. «...այլ Քրիստոս իբրեւ որդի ի վերայ տան իւրոյ. որոյ տունն մեք իսկ ենք, միայն թէ զհամարձակութիւն եւ զպարծաճս յուսոյն միջէն ի վախճան հաստատուն ունիցիմք»:  
 50 Եւսեբիոս Կեսարացի, Եկեղ. պատմ. VII, 15, 4:

51 Krautheimer 1986, p. 27; Duval 1975; White 1990, p. 115; Peña 1996, p. 63:  
 52 Թորամանեան 1942, I, p. 169:

համայնքների միջեւ եղած մրցակցութեամբ, կամ էլ մեծ մայրաքաղաքների մոդային հետեւելու ցանկութեամբ<sup>53</sup>: Սակայն, մեր կարծիքով, այս բոլորն աւելի շուտ հետեւանքներ են եւ ոչ՝ պատճառներ: Համաձեւութեան հաստատման առաւել հաւանական բացատրութիւն է թուում եկեղեցու շինութեան սրբազնացումը, որ հրէական Տաճարի կամ Հեթանոսական մեհեանների նման այլեւս սկսում է համարուել քրիստոնէական Աստուածութեան՝ Սուրբ Երրորդութեան կացարանը: Ոչ միայն այն ձեւք է բերում ճանաչելի յատկագիծ եւ խորհրդաբանական իմաստ կրող կառուցուածքային մանրամասներ, այլեւ շինութեան Հիմնարկէքը եւ աւարտը նշանաւորւում են տեղավայրը եւ կառոյցը սրբազործելու համար մշակուած յատուկ ծէսերով:

Այդուհանդերձ, ի տարբերութիւն Հրէական Տաճարի, որ եզակի էր եւ անկրկնելի, քրիստոնէական Տաճարը «յոգնակի» բնոյթ ունի եւ կարող է բազմապատկուել Հեթանոսական տաճարների օրինակով, կամ, աւելի ճիշտ, 70 թ. Տաճարի կործանումից յետոյ սրբազնացուած սինագոգների օրինակով:

Եկեղեցու սրբազնացման գործընթացը սկզբնաւորւում է արդէն երրորդ դարի վերջերից, որ յայտնի է որպէս քրիստոնեաների՝ դէպի «այս աշխարհ» արմատական դարձի շրջան՝ պայմանաւորուած Եկեղեցու Փոքր Խաղաղութեան գործունակ (260-303 թթ.)<sup>54</sup>: Միտումը վերջնական թափ է ստանում 311 թ. Հանդուրժողութեան հրովարտակի ընդունումից եւ յատկապէս 313 թ. քրիստոնէութեան հրապարակայնացումից յետոյ: Կայսրութեան հասարակութեան մէջ մինչ այդ որպէս օտար մարմին պարկուճուած քրիստոնէական համայնքը յանկարծ զգում է իրեն ընդունե-

լի, ինտեգրուած, աւելին՝ հովանաւորուած<sup>55</sup>: Նա անգամ բարձրագոյն հրահանգ է ստանում աղօթելու կայսրերի եւ կայսրութեան փրկութեան համար<sup>56</sup>: Այդ ժամանակուայ քրիստոնեաները յայտնուում են մի տեսակ էյֆորիկ վիճակի մէջ, քանի որ նրանց ընկալմամբ Հրովարտակն ազդարարում էր երկրի վրայ Աստծոյ արքայութեան Հնարաւոր իրականացումը:

Աստծոյ երկրային արքայութեան գաղափարը ծիւր է արձակում կայսերապետութեան գաղափարի քրիստոնէացման Հետզուգահեռ. միակ եւ ընդհանրական պետութեան գոյութիւնը, որ դեկավարուում է մէն եւ միակ կայսեր կողմից, որին նոյնպէս մէն եւ միակ Աստուած իշխանութիւն է շնորհել եւ միակ Աստուած իշխանութեան կատարեալ պէս Աստծոյ արքայութեան կատարեալ պատկեր<sup>57</sup>: Ժամանակի քաղաքական աստուածաբանութեան բանալին կայսերական տուն-տիրուտի սրբազնացումն է՝ որպէս երկինստիտուտի սրբազնացումն պատկեր եւ ընկալում էր վրայ երկնքի արքայութեան անմի սրբազնաօրինակ, ինչպէս եւ կայսեր անմի սրբազնացումը՝ որպէս երկրի վրայ Քրիստոսի ներկայացուցիչ եւ փոխանորդ<sup>58</sup>:

Երկնքի արքայութեան հաւանական էջքի գաղափարը, բնականաբար, պէտք է բերէր «ամենասուրբ, բարձրեալ եւ կատարեալ» երկնային խորանի՝ երկրի թշնելու հաւանականութեան գաղափարին. այն այլեւս կարող էր կոնկրետաւորաբար արտայայտական նիւթական տեսքով:

Այսպիսով՝ չորրորդ դարի առաջին տասնամեակներին առաջին անգամ հանդիպում է «տաճար» եզրը՝ գործածուած «եկեղեցի» իմաստով, միաժամանակ նաեւ՝ նոր կառուցուած «աղօթքի տներին» նաւակա-

55 Maraval 1997, p. 5.  
 56 HC, II, p. 183.  
 57 Maraval 1997, p. 29.  
 58 Cameron 1999, p. 35.

տիքների մասին յիշատակութիւնը<sup>59</sup>: Եկեղեցու շինութեան սրբազնացման նախաձեռնութիւնն առաջին անգամ փորձ է անում աստուածաբանօրէն Հիմնաւորել քրիստոնէական եկեղեցու պատմահայր եւ ժամանակի մեծագոյն գիտնական Եւսեբիոս Կեսարացին՝ Տիւրի նորակառոյց մայր եկեղեցու նաւակատիքի առիթով յօրինուած «խօսքում», 315-17 թթ.<sup>60</sup>: Այս ճառը գետեղուած է նրա՝ Եկեղեցու պատմութեան տասներորդ հատորում, եւ կազմում է չորրորդ գլուխը: Եւսեբիոսի «խօսքի» մանրակրկիտ վերլուծութիւնը կը ներկայացնենք յաջորդ յօդուածով:

**Մատենագիտութիւն**



1. Borret (M.) 1967-69 – Origène, Contra Celsum, Introduction, commentaries, notes, Sources Chrétiennes, 136, 147, 150, Paris
2. Burtchaell (J.T.) 1992 - From Synagogue to Church, Cambridge
3. Cameron (A.) 1999 - Eusébe de Césarée, Vita Constantini, Introduction, Translation and Commentary, Oxford
4. DEB - Dictionnaire Encyclopédique de la Bible, Paris 1960
5. Duval (N.) 1975 - "Les édifices de culte des origines à l'époque constantinienne", Atti del IX Congresso Internazionale di Archeologia Cristiana, Rome (1978), II, p. 513-537
6. Goulet (R.) 2003 - Macarios de Magnésie, Le Monogéné, T. I, Introduction générale, Paris
7. HC - Histoire du Christianisme, vol. I – Le nouveau peuple (des origines à 250), Paris, 2000, vol. II - Naissance d'une chrétienté (250-430), Paris 1995
8. Hoening (S. B.) 1963 - "The suppositious Temple-Synagogue", Jewish Quarterly Review, 54, pp. 115-131, reprint in: The

- Synagogue: Studies in Origins, Archaeology and Architecture, New York, 1975, pp. 55-71
9. Krautheimer (R.) 1986 - Early Christian and Byzantine Architecture, 4e éd., New Haven and London
10. Laurin (J.R.) 1954 - "Le lieu du culte chrétien d'après les documents littéraires primitifs", Analecta Gregoriana, 70, pp. 39-57
11. Le Boulluec (A.) 1997 - Clément d'Alexandrie, Stromates, L. VII, Introduction, texte critique, traduction et notes, Paris, Sources Chrétiennes 429
12. Maraval (P.) 1997 - Le christianisme de Constantin à la conquête arabe, Paris
13. Marrou (H-I.) 1965 - À Diognète, Introduction, texte critique, traduction et notes, 2e éd., Sources Chrétiennes, 33bis, Paris 1965
14. Marrou (H-I.) 1985 - L'Église de l'Antiquité tardive, Paris
15. Mohrmann (C.) 1962 - "Les dénominations de l'église en tant qu'édifice en grec et en latin au cours des premiers siècles chrétiens", Revue des Sciences Religieuses, °n 3-4, pp. 155-174
16. NDB - Nouveau Dictionnaire Biblique, Paris 1961
17. Parrot (A.) 1954- "Le Temple de Jérusalem", Cahiers d'Archéologie Biblique, 5
18. Peña (I.) 1996 - The Christian Art of Byzantine Syria, Madrid
19. Picard (J-C.) 1991 - "Les évêques bâtisseurs", Naissance des arts chrétiens: Atlas des monuments paléochrétiens de la France, Paris
20. Vaes (J.) 1986 - "Nova construere sed amplius vetusta servare": La réutilisation chrétienne d'édifices antiques (en Italie)", XIe Congrès International de l'Archéologie Chrétienne, (Lyon-Genève-Aoste), Paris-Rome (1989), vol. I, pp. 299-321
21. Van Eldere (D.) 1984 - Informatie over de Vroegchristelijke Architectuur, Geboden Door de Kerkvaders tot 400 na Christus, I-II, Thèse de Doctorat, inédite, Université Catholique de Louvain
22. White (L.) 1990 - Building God's House in the Roman World, Baltimore


<sup>59</sup> Տե՛ս Եւսեբիոս Կեսարացի, Եկեղ. պատմ., X, 3 եւ 4; Lactance, De mort. pers., 12, 5:  
<sup>60</sup> Տիւրի մայր եկեղեցու կառուցման թուականի մասին տե՛ս Krautheimer 1986, p. 44:

23. Wilkinson (J.) 2002 - From Synagogue to he Church: the Traditional Design, its Beginning, its Definition, its End, London
24. Zeitlin (S.) 1930-31 - "The Origin of the Synagogue", Proceedings of the American Academy for Jewish Research, 2, pp. 69-81, reprint in: The Synagogue: Studies in Origins, Archaeology and Architecture, New York, 1975, pp. 14-26
25. Եւսեբիոս Կեսարացի, Պատմ. – Պատմութիւն եկեղեցւոյ, համեմ. հրատ. ասորերէն բնագրի 5-րդ դարի հայերէն թարգմանութեան եւ յունարէնից նոր թարգմանութեան, Ա. Շարեան, Վեներիկ, 1877
26. Թորամանեան (Թ.) 1942 – Նիւթեր հայ նարտարապետութեան պատմութեան, հտ. 1, Երեւան


27. Փիլոն, Ելից... - Փիլոն Ալեքսանդրացու Ելից մեկնութիւն, Philon d'Alexandrie *Questiones et solutiones in Exodum, versione armeniaca et fragmenta graeca*, texte latin, trad. française, introd. et notes par A. Terian, *Les Œuvres de Philon d'Alexandrie*, 34c, Paris 1992
28. Փիլոն, Մովսէս... - Փիլոն Ալեքսանդրացու Ծննդոց մեկնութիւն, Philon d'Alexandrie, *Quaestiones et solutiones in Genesim, e versione armeniaca*, texte latin, trad. française, introd; et notes par C. Mercier, 2 vol., *Les Œuvres de Philon d'Alexandrie*, 34a-b, Paris 1979-1984




1. Սողոմոնի տաճարի վերակազմութիւնը ա. յատակագիծ, բ. ծառայապատկեր




2. Հրէական տաճարի վերակազմութիւնն ըստ սրբագան համամասնութիւնների (Ջոն Ուիլկինսոն)



3. Մասադայի սինագոգը՝ կառուցուած մինչեւ 70 թ.



4. Դուրա Երոպոսի սինագոգը, 244-45 թթ.



5. Դուրա Երոպոսի տուն-էկեղեցին, Գ. դար

ՊԱՐՈՅՐ ՄԱՄԱՐԷԻ ՄՈՒՐԱԴԵԱՆ

Պատմական գիտութիւնների դոկտոր, Մեսրոպ Մաշտոցի մրցանակի դափնեկիր, պրոֆ. Պ. Մ. Մուրադեանը պատմաբանասիրական լայն ընդգրկում ունեցող միջնադարագէտ-պատմաբան էր: Նրա գիտական հետաքրքրութիւնների եւ հետազոտութիւնների շրջանակը պայմանաւորուած էր աղբիւրագիտական եւ պատմաբանասիրական ընդգրկուն պատրաստութեամբ: Համալսարանական կրթութեամբ իրանագէտ լինելով՝ Պ. Մ. Մուրադեանն ասպիրանտական ուսումնառութիւնն անցել է վրացագիտութիւն-կովկասագիտութիւն մասնագիտութեամբ՝ ակադ. Կ. Ս. Կեկելիձէի ղեկավարութեամբ, իսկ Հայագիտութեամբ, մասնաւորապէս՝ աղբիւրագիտութեամբ ու ձեռագրագիտութեամբ պարապել է ակադ. Լ. Ս. Խաչիկեանի վերագիտութեամբ:

Միջնադարեան Հայաստանի տնտեսական, մշակութային ու էթնիկական պատմութեան բազմադիմի զարգացումները եւ աղբիւրները դարաւոր իր հարեւանների վրացիների, պարսիկների, բիւզանդացիների, աղուանների հետ կարիք ունեն ճշգրտուած սկզբնաղբիւրների, նրանց սպառիչ մեկնաբանութեան: Հայոց պատմագիտութեան բնագաւառում Պ. Մ. Մուրադեանն առաջիններից էր, որ ձեռնամուխ եղաւ Ագաթանգեղոսի եւ Ղազար Փարպեցու պատմութիւնների հնագոյն պատճառիկների բացայայտմանն ու վերծանութեանը: Բնագրագիտական հանգամանալիքնութեան ճանապարհով նա սահմանեց պատմիչների երկերում յետագայ ընդմիջարկութիւնների ներկայութիւնը եւ այդպիսիք սրբագրելու աղբիւրները: Միաժամանակ կազմեց Ագաթանգեղոսի երկի հայերէն կամ յունարէն բնագրերից կառուուած հին վրացական խմբագրութիւնների գիտաբնական բնագրեր՝ դրանք օժտելով

հայերէն թարգմանութեամբ ու պահանջուող ուսումնասիրութեամբ:

Հայագիտական հետազոտութիւնների աղբիւրագիտական հիմունքների նշանակալի ընդլայնմանն են ծառայում Պ. Մ. Մուրադեանի աշխատասիրութեամբ կազմուած «Սուրբ Շուշանիկի վկայաբանութեան» գիտական բնագրերը՝ աղբիւրագիտական ընդարձակ ուսումնասիրութեամբ, ինչպէս նաեւ՝ վրացերէնով պահպանուած երկու յուշարձանի՝ «Դաւթի եւ Տիրիծանի վկայաբանութեան» եւ «Կողացի ինը մանկայաբանութեան» հայերէն թարգմանութեանը՝ ներածական քննութեամբ: Այս շարքին են պատկանում վրաց անաւան «Ժամանակագրութեան», «Հայոց նուն «Ժամանակագրութեան», «Հայոց վարք սրբոցի վրացական խմբագրութեան» Պ. Մ. Մուրադեանի հայերէն հրատարակութիւնները՝ ներածական քննութեամբ: Բնագրական սրբագրութիւններից գատ, աշխատասիրողը յիշեալ հրատարակութիւններն օժտել է Հայաստանի ու վրաստանի մատենագրութեան պատմութեան համար պայ յուշարձանների նշանակութիւնը ներկայացնող լուսաբանութիւններով: Նրանցում, ինչպէս նաեւ «Սայաթ-Նովան ըստ վրացական աղբիւրների» եւ «Հայ-վրացական մատենագրական յարաբերութիւնները XVIII դարում» մենագրութիւններում, հեղինակը ի յայտ է բերել ու մեկնաբանել Հայոց ու վրաց ճակատագրերի ընդհանրութեան, նրանց մշակութային մերձութեան բազում նոր իրողութիւններ: Այս մարդում Պարոյր Մուրադեանը յաջողութեամբ շարունակել է գիտական կովկասագիտութեան հիմնադիր ակադ. Նիկողայոս Մառի բանասիրական լուսագոյն աւանդութիւնները:

Նշանակալի է Պ. Մուրադեանի վատակը Հայոց միջնադարեան մշակութի եւ ճարտարապետութեան պատմութեան ու-